


## 1.2 Արտադրություն (ծառայություններ)

### 1.2.1. Արդյունաբերություն

**Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը:** 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, արդյունաբերական 1810 կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 123052.6 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 121784.1 մլն դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 13938.5 մլն դրամի, այլ երկրներում՝ 26202.3 մլն դրամի արտադրանք:

2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 113.9%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 115.3%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան  
2001թ. դեկտեմբերի նկատմամբ, %



Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

(%)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
<b>2002 թ.</b>			
հունվար	71.7	107.1	71.7
փետրվար	100.9	104.5	72.3
մարտ	116.4	116.9	84.2
ապրիլ	88.1	115.6	74.2
մայիս	95.2	107.3	70.6
հունիս	103.7	115.8	73.2
հուլիս	114.4	104.6	83.7
օգոստոս	96.0	96.1	80.4
սեպտեմբեր	102.7	116.1	82.6
հոկտեմբեր	108.3	137.4	89.5
նոյեմբեր	94.8	123.7	84.8
դեկտեմբեր	127.1	100.3	107.8
<b>2003 թ.</b>			
հունվար	78.9	109.9	78.9
փետրվար	99.1	105.7	78.2
մարտ	105.5	115.5	82.5
ապրիլ	94.9	126.2	78.3


**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն  
ըստ տնտեսական գործունեության տեսակների<sup>1</sup>**

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով <sup>2</sup> , մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով <sup>2</sup> , մլն դրամ	2003թ. հունվար-ապրիլին, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզի- կական ծավալի ինդեքսը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ (համադրելի գներով), %
<b>Ամբողջ արդյունաբերությունը</b>	<b>123052.6</b>	<b>121784.1</b>	<b>113.9</b>
<i>այդ թվում՝</i>			
<b>էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում</b>	35790.4	35790.4	109.2
<i>դրանից՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գուլորշու արտադրություն և բաշխում	33653.5	33653.5	110.4
<i>որից՝</i>			
էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գուլորշու արտադրություն և բաշխում	31150.9	31150.9	111.9
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	2502.6	2502.6	95.1
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	2136.9	2136.9	93.2
<b>հանքագործական արդյունաբերություն</b>	12667.6	9152.7	117.0
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	12220.2	8704.2	117.5
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	447.4	448.5	104.1
<b>մշակող արդյունաբերություն</b>	74594.6	76841.0	115.1
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	40380.4	41560.3	106.2
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	3563.8	3290.8	163.4
մանածագործական արտադրություն	513.3	498.1	121.5
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	412.3	336.0	89.7
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	53.1	41.8	61.6
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	391.7	399.0	150.5
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	1466.8	1450.5	121.7
քիմիական արդյունաբերություն	1300.1	1198.5	137.0
ռետինե և պլաստմասսայե արտադ- րատեսակների արտադրություն	272.9	233.7	170.4
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	2449.6	2407.3	109.9
մետաղագործական արդյունաբերություն	11164.1	13225.0	112.2
պատրաստի մետաղե արտադրատե- սակների արտադրություն	1022.8	753.8	166.3
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	1241.4	1282.7	95.5
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	7458.3	7222.5	120.5
գործունեության այլ տեսակներ	2904.0	2941.0	162.1



<sup>1</sup> Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

<sup>2</sup> Հաշվարկված են առանց ավելացված և ակցիզային հարկերի:


Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2003թ. հունվար-ապրիլին



Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում




Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




- Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն
- 1. հիդրոէլեկտրակայաններում
- 2. ջերմաէլեկտրակայաններում
- 3. ատոմային էլեկտրակայանում
- Էլեկտրաէներգիայի հաղորդում և բաշխում էլեկտրացանցերի կողմից

Հանքագործական արդյունաբերություն



- մետաղե հանքաքարերի արդյունահանում
- հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր

Մշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ուսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

2003թ. հունվար-ապրիլին արտադրված (հաշվառվող) 100 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 55-ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2002թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 51-ից 31-ի և սպառողական ապրանքների՝ 49 -ից 24-ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները<sup>1</sup>

(մլն դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-ապրիլին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2003թ.	2002թ. <sup>2</sup>	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	48323.4	44238.9	109.2
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	27955.8	26784.3	104.4
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	10244.5	9871.0	103.8
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	10123.1	7583.6	133.5
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության <sup>3</sup>	2425.2	2457.5	98.7
մշակութային և տնտեսական նշանակության	7697.9	5126.1	150.2

<sup>1</sup> Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

<sup>2</sup> 2002թ. սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2003թ. գներով:

<sup>3</sup> Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Ընդհանուր առմամբ, 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում թողարկվել է 2008.1 մլն.կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2002թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 101.6%-ը: Ընդ որում, ՋԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 38.1 %-ով, ՋԷԿ-երում՝ 55.4% -ով, իսկ ՋԱԷԿ-ում նվազել է 41.6% -ով:

2003թ.հունվար-ապրիլին ՋԱԷԿ-ը թողարկել է 578.7 մլն.կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 28.8%-ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 832.8 մլն. կվտ ժամ և 41.5%-ը, ՋԷԿ-երը՝ 596.6 մլն. կվտ ժամ և 29.7%-ը: 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում թողարկվել է 220.4 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2002թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 160.9%:

**Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները<sup>1</sup>**

	2003 թ. հունվար-ապրիլ	2002 թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլը 2002 թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Միս <sup>2</sup> , տոննա	10756	9580	112.3
Երշիկեղեն, տոննա	384.6	396.0	97.1
Պանիր <sup>2</sup> , տոննա	1351.1	1351.9	99.9
Պաղպաղակ, տոննա	161.1	174.9	92.1
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) <sup>2</sup> , տոննա	49851	48869	102.0
Պահածո, հազ. պայմ. բանկա	7.2	627.8	1.1
Ալյուր, տոննա	46575	36333	128.2
Չավարեղեն, տոննա	8.1	9.0	90.0
Հաց և հացամթերք, տոննա	97902	98103	99.8
Հրուշակեղեն, տոննա	1303.2	867.1	150.3
Մակարոնեղեն, տոննա	370.9	293.2	126.5
Բուսական յուղ, տոննա	252.8	1073.7	23.5
Օղի և օղու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	3004.2	2094.8	143.4
Կոնյակ, հազ. լիտր	2083.3	2015.4	103.4
Խաղողի գինի, հազ. լիտր	648.4	616.4	105.2
Շամպայն գինի, հազ. լիտր	132.3	84.0	157.5
Գարեջուր, հազ. լիտր	1249.6	1313.2	95.2
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	7202.6	6382.7	112.8
Բնական հյութեր, հազ. լիտր	1252.2	467.3	2.7անգամ
Հանքային ջրեր, հազ. 0,5 լ շիշ	12985	10586	122.7
Աղ, տոննա	8522.9	7597.7	112.2
Սիգարետներ, մլն. հատ	718.3	523.0	137.3
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	861.5	851.5	101.2

**Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները**

	2003 թ. հունվար-ապրիլ	2002 թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլը 2002 թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ <sup>2</sup>	65.7	118.4	55.5
Բրդյա գործվածքներ, հազ. մ <sup>2</sup>	-	3.4	-
Գորգեր և գորգեղեն, մ <sup>2</sup>	5189	6892	75.3
Գուլպեղեն, հազ. զույգ	84.0	115.8	72.5
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	889.4	721.1	123.3
Կարի արտադրանք <sup>3</sup> , մլն. դրամ	1854.8	2129.9	87.1

<sup>1</sup> Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):

<sup>2</sup> Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

<sup>3</sup> Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

2003թ. հունվար-ապրիլին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից քիմիկա-դեղագործական արտադրանքի արտադրությունը 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 69.7%-ով, պլաստմասսայից իրերինը՝ 33.5%-ով, լաբաներկանյութերինը՝ 21.6%-ով, լվացող և մաքրող միջոցներինը՝ 6.7%-ով:

**Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները**

	2003 թ. հունվար-ապրիլ	2002 թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ <sup>3</sup>	3365	5655	59.5
Ապրանքային բետոն, մ <sup>3</sup>	9724	2673	3.6անգամ
Երեսպատման սալեր բնական քարից, մ <sup>2</sup>	10476	11292	92.8
Ոչ հանքային շինանյութեր, մ <sup>3</sup>	41655	36451	114.3
Կիր, տոննա	-	1971	-
Ցեմենտ, հազ. տոննա	69.9	77.4	90.3
Գաջ, տոննա	8780	4412	199.0
Կանոնավոր կտրվածքի տուֆ, մ <sup>3</sup>	6523	11106	58.7
Ծակոտկեն լցանյութեր, մ <sup>3</sup>	15887	12648	125.6
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ <sup>2</sup>	8123	2817	2.9անգամ

**Մետաղագործական** արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ալյումինե գլանվածքի արտադրությունն ավելացել է 18.1 անգամ, ալյումինե փայլաթիթեղինը՝ 3.2 անգամ, պղնձե խտանյութում պղնձինը՝ 16.0%-ով, իսկ կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունը նվազել է 7.8 %-ով:

**Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները**

	2003 թ. հունվար-ապրիլ	2002 թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլը 2002 թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	104	73	142.5
Ռելեներ, հազ. հատ	80.6	103.0	78.2
Ուժային ճկուն կաբելներ, կմ	0.6	0.8	75.0
Տեղակայման հաղորդալարեր, կմ	13.6	429.5	3.2
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	2872.7	4187.7	68.6
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	157	132	118.9
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	128	41	3.1անգամ
Պոմպեր, հատ	709	96	7.4անգամ
Ջրային հաշվիչներ, հատ	70321	1705	41.2անգամ
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	19	-	-